# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«ՍԵՅՖ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ն ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/16 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 11 | դրոշմակնիք | 150 | 150 | A-TEXNOLDJI LLC | Պլաստմասե դրոշմակնիք: Նյութը – 100% պոլիպրոպիլեն չժանգոտվող պողպատից ներդիրի փականով: Կառուցվածքը պետք է բացառի դրա բաղադրամասերի, ըստ նշանակության, կրկնակի օգտագործումը: Ընդհանուր երկարությունը առնվազն`–240-250մմ, աշխատանքային մասի երկարություն ըառնվազն` 140-150մմ, աշխատանքային մասի հաստությունը առնվազն` 2.3 մմ, ամրացումը ձեռքով հսկիչ համարն ու սերիան մինչև 8 նիշ, դրոշմված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ջերմային կնիքով կամ լազերային, միջին պոկման դիմացկունությունը ոչ պակաս 15կգ, փաթեթավորումը մեկ արկղում 1000 հատ, արկղի վրա պետք է նշված լինի արտադրման տարեթիվը, արտադրողի անվանումը և արկղի համարը, շտրիխ կոդերը հերթական: Դրոշմակնիքը պետք է ունենա ամենաբարձր կայունությունը չարտոնված բացման, մանիպուլյացիաների, հատուկ միջոցներով ներգործության դեմ, որոնց չափանիշը կազմում է 60-100 նորմա-րոպե:Պետք է դիմակայի օդի ջերմաստիճանի առնվազն` -40C-ից մինչև +60C շահագործման պայմաններին, մինչև 98 տոկոս օդի հարաբերական խոնավության պայմաններում: Պետք է պահպանի աշխատունակությունը առնվազն 5տարի: Մակնշումը պետք է կայուն լինի փոխարինման կամ կեղծման փորձերի նկատմամբ, պետք է իրականացվի այնպես, որ ապահովվի դրա վրա չարտոնված ազդեցության հետքերի, դրա կեղծման հետքերի հայտնաբերումը և պահպանումը: Մակնշման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ցանկացած փոփոխություն պետք է ուղեկցվի դրանց ակնհայտ ֆիզիկական, քիմիական, ջերմային կամ այլ վնասներով կամ ոչնչացմամբ: Դրոշմակնիքը պետք է ունենա մեծ կայունություն կոռոզիայի դեմ: Ընդհանուր դիզայնը, պատվիրատուի՝ ՇՎՏՄ-ի տարբերանշանը, լոգոն, դրոշմակնիքի գույնը, շտրիխ կամ qr կոդերը՝ գեներացված դրոշմակնիքի համարներով և դրոշմակնիքի համարակալումը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Դրոշմակնիքի վրայի գրառումը պետք է լինի հստակ ճանաչելի (ընթեռնելի) բնական կամ արհեստական (50лк) լույսի դեպքում 0.5-1 մ հեռավորությունից: Պետք է անհնարին լինի առանց տեսանելի հետքերի հեռացումը: Պարտադիր պահանջ ՀՀ ում և այլ երկրներում նույն դրոշմակնիքներից սերիական համարներով և շտրիխ կոդերով չհայտնվելու փասթաթղթավորված գրավոր երաշխիք: Մատակարարը պահանջվող տեխնիկական բնութագրին, մատակարարվող ապրանքի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համապատասխանության վերաբերյալ պետք է ներկայացնի ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի գոստ ստանդարտով ներկայացված տեխնիկական պահանջներին համապատասխանության վերաբերյալ գոստ հավաստագիր (գոստ սերտեֆիկատ) և պարտավոր է իր միջոցներով ներկայացնի իրավերով սահմանված տեխնիկական բնութագրի չափորոշիչներով փորձարկման արդյունքների վերաբերյալ հավաստող լաբորատոր փասթաթղթեր: Մատակարարվող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում 5 տարի, ապրանքը գնորդի կողմից ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հետո, օգտագործման ընթացքում հայտնաբերված թերությունները պետք է փոխարինվեն նորերով: Ապրանքների տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

«ՍԵՅՖ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՎԱՇՎՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/16 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 11 | | | | | |